



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 19 ՍԵՄՏԵՄԵՐ, 2022

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԷԼ ԵՒ ԽՍՍԵԼ ԵՒ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս ԿԻՍ. ԵՒ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 2

ԱՍՏՈՒԾՈՅ ՕԾԵԱԼ ԹԱԳԱԻՈՐԸ

Ինչո՞ւ ազգերը ապստամբեր են,
ժողովուրդները դաւանանութեան ծրագիր կը մշակեն.
աշխարհի թագաւորները կը պատրաստուին
եւ իշխանները կը միաբանին՝
Տիրոջ եւ անոր Օծեալին դէմ:
Կ'ըսեն. «Կտրենք անոնց շղթաները,
մեր վրայէն թօթափենք անոնց լուծը»:
Երկինքի գահակալը պիտի ծիծաղի անոնց վրայ.
Տէրը ծաղրի պիտի ենթարկէ զանոնք:
Երբոր ժամանակը գայ՝
Տէրը իր բարկութեամբ պիտի խօսի անոնց,
իր գայրոյթով պիտի խոռվեցնէ զանոնք, ըսելով.
«Ես իմ թագաւորս կարգեցի սուրբ լեռան՝ Սիոնի վրայ»:
Ահա կը յայտարարեմ Տիրոջ ինծի տուած հրամանը.
Տէրը ինծի ըսաւ. «Իմ որդիս ես դուն, այսօր քեզ ծնայ:
Խնդրէ ինձմէ, եւ ազգերը քեզի պիտի տամ՝ իբրեւ ժառանգութիւն,
ամբողջ աշխարհը քեզի պիտի տամ իբրեւ ստացուածք:
Զանոնք երկաթէ գաւազանով պիտի հովուես,
կաւէ անօթի պէս պիտի փշրես զանոնք»:
Հետեւաբար, թագաւորներ, այս բանը լաւ հասկցէք,
դուք՝ աշխարհը կառավարողներ, լսեցէք եւ զգուշացէք,
երկիւղով Տէրը պաշտեցէք, եւ դողալով անոր առջեւ խոնարհեցէք.
հեզութեամբ ենթարկուեցէք, որպէսզի ան չբարկանայ,
եւ չըլլայ որ ձեր ընթացքով կորսուիք,
երբոր անոր բարկութիւնը բորբոքի:
Երանելի են անոնք, որոնք Տիրոջ կ'ապաւինին:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՄԱՂՄՈՍ 2



Աստուծոյ Օծեալ Թագաւորը

Սաղմոսներու ներածականի ժամանակ ըսուեցաւ, որ Սաղմոսներու դասակարգումներ կան, ինչպէս՝ Օրհներգութիւններ, Թագաւորական, ուխտաւորներու, իմաստութեան, ողբի եւ գոհաբանական: Ահա 2-րդ Սաղմոսը թագաւորական սաղմոսներու դասարակուզիմ փակ կ'իյնայ: Այսինքն՝ Մեսիական Սաղմոս, Քրիստոսի ու անոր թագաւորութիւն պատկերացնող Սաղմոս մըն է:

Առաջին իսկ առիթով Սաղմոսներու գարնանքով կ'արտայայտուի ըսելով. «Ինչո՞ւ» ազգերը կ'ապստամբին, ժողովուրդներ դաւաճանութեան ծրագիր կը մշակեն, թագաւորները կը պատրաստուին, իշխանները կը միաբանին Տիրոջ ու Անոր Օծեալին դէմ: Որովհետեւ պարճառ մը չունին այդ բոլորը ընելու, երկրորդ՝ ի գուր է այդ բոլոր ճիգերն ու ծրագիրները: Հետաքրքրական է Բաբելոնի աշխարհակաշինութեան օրէն սկսեալ, մարդ արարածը մնայուն ճիգ կը թափէ Աստուծոյ եւ Անոր Օծեալին դէմ ապստամբելու, բայց ոչ առանձին, այլ՝ միասին: Որովհետեւ Քրիստոս Հօր Աստուծոյ ճշմարիտ պատկերն է, ուրեմն Հօր Աստուծոյ դէմ ապստամբիլ, կը նշանակէ Քրիստոսի դէմ ապստամբիլ, Քրիստոսի դէմ ապստամբիլ, կը նշանակէ՝ Հօր Աստուծոյ դէմ ապստամբիլ:

Ահա մարդուն սխալ ըմբռնումը Աստուծոյ նկատմամբ: 3 հմր «Կորենք անոնց շղթաները, մեր վրայէն թօթափենք անոնց լուծը», ընդհակառակը՝ Աստուած ինք է որ մեզ կ'ազատագրէ մեղքի շղթաներէն ու լուծէն, եւ ոչ թէ Ինք մեզ կը շղթայէ կամ լուծի փակ կը դնէ: Ահա այս բոլորին դիմաց, Աստուծոյ վերաբերմունքը. Ան կը ծիծաղի մարդոց ու անոնց խորհուրդներուն վրայ: Ինչո՞ւ: Նախ, որովհետեւ Ինք երկինքի մէջ նստած է, Թագաւորական գահին: Ընդհակառակը մարդկային վիճակն է, որ երբ յանկարծ թագաւորութեան մը դէմ ապստամբութիւն ծրագրուի միւս թագաւորներու կողմէ, այդ թագաւորը խուճապի կը մտնուի, մինչ Աստուծոյ պարագային կը ծիծաղի: Ահա այս փողերը կու գան մեզի փալու վստահութիւնը, որ եթէ երբեք Աստուծոյ կ'ապաւինինք ի՞նչ բանէ վախնալու ենք: Կամ Պօղոս Առաքեալի բացատրութեամբ՝ որ եթէ Աստուած մեր կողքին է, ով է մեզ հակառակ: Առաւել եւս, Տէրը ոչ թէ միայն կը ծիծաղի, այլ նաեւ ծաղրի պիտի ենթարկէ զանոնք: Մարդկային պատմութեան հոլովոյթին մէջ, քանի-քանի կայսրեր, թագաւորներ եկան ու ծանր հալածանքներ մղեցին Քրիստոսի ու Անոր եկեղեցիին դէմ, բայց այսօր ահա այդ թագաւորներն ու կայսրերը չկան, բայց Քրիստոս փակաւին կը քարոզուի, Քրիստոսի եկեղեցին փակաւին կը գործէ:

Երբոր ժամանակը գայ, Տէրը բարկութեամբ պիտի խօսի անոնց հետ: Աստուծոյ համբերաբարութիւնը, Անոր ողորմութիւնն ու սէրը, որ հակառակ մարդուն ապստամբութեամբ, Տէրը անմիջապէս չի ոչնչացներ մարդը, այլ նախ ազդարարութեան նշան է որ կու փայլ, որպէսզի մի գուցէ անդրադառնալ մարդը, ու ապշաբարութեան վերադառնայ առ Աստուած: Աստուած նաեւ կը յայտարարէ ըսելով. «Ես իմ թագաւորս կարգեցի, սուրբ լեռանս՝ Սիոնի վրայ», ոչ թէ պիտի կարգէ, արդէն կարարուած իրավիճակով կը ներկայացնէ, կարգեցի:

7-9 հմրները ցոյց կու փան Հօր եւ Որդիին միջեւ եղած կապը, իբրեւ Աստուծոյ Որդի, համագոյակից: Ծնայ բացատրութիւնը անով ցոյց փալու Քրիստոսի աստուածութիւնը: Առաւել, Որդիին կը փրուի ազգերը իբրեւ ժառանգութիւն, ամբողջ աշխարհը իբրեւ ստացուածք: Իսկ թագաւորութիւնները կը նմանցնէ կաւէ ամաններու, որոնք երկաթէ գաւազանով պիտի հովուէ: Այսինքն՝ որքան ալ այդ թագաւորութիւնները զօրաւոր կը թուին կամ կը կարծուին, Աստուծոյ աչքին կաւէ ամանի պէս են, մանաւանդ՝ երբ Ան երկաթէ գաւազանով կը հովուէ: Ահա ճիշդ ասոր համար է որ Տէրը կը ծիծաղի:

10-12 հմրները կը զգացնէ թագաւորներուն եւ աշխարհի ղեկավարներուն, որ լաւ հասկնան, լսեն ու զգուշանան, երկիւղով Տէրը պաշտեն, եւ ոչ թէ Անոր դէմ ապստամբին, եւ իրենց անձերը խոնարհեցնեն, որպէսզի չկորսուին երբոր Անոր բարկութեան օրը գայ: Ուրեմն, փոխանակ իրենք իրենց ուժին եւ թագաւորութեան վստահելու, Տիրոջ ապաւինին:

Պահապան ամենայնի Քրիստոս,

*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*